

«յոյժ խոնարհ եւ հեզ, առաքինի եւ սուրբ, կոյս եւ ընտիր»⁷, «պարկեշտ եւ սրբակրօն վարուք, խոշորազգեստ եւ պահեցող»⁸ :

Կաթողիկոսի «գեղեցկազիր եւ փառազարդ դէմքը», որ այնքան պատշաճած էր անոր «միջնաչափ հասակին», թէպէտ ըստ արտաքինոյն «ահարկու» կ'երեւցնէր իր անձը, բայց «բնական, բանական եւ կրթական իմաստութիւնը», որով ծաղկած եւ բարգաւաճած էր, կը պարգեւէր իրեն զուարթերես տեսիլ, կ'ընծայէր զինքը «շնորհաշուք», «ճոխութեամբը» պատկառազեցիկ, բայց եւ «պարզ» բնաւորութեամբը» սիրելի եւ «ազատական մտքովը» մոգիչ եւ «մեծախորհուրդ» իմացուածովը յանկուցիչ եւ համոզիչ: Թէպէտ մեծազգի տոհմէ էր, բայց սիրեց պարզութիւնը. եւ պարկեշտ եւ սրբակրօն վարքովը ապրեցաւ աղքատին հետ ընտանի եւ մեծատունին հետ հաշտ: Որովհետեւ «խոշորազգեստ եւ պահեցող» էր, երեւցաւ կենցաղասէրներուն անսիրելի. եւ չուզեց ինքն ալ հաշտութիւն կնքել անոնց հետ:

Մովսէս մանուկ հասակէն նուիրուած Ս. Խորանի, փարեցաւ իւր կոչման ոգւով չափ եւ մնաց անոր հաւատարիմ մինչեւ իւր վերջին շունչը: Կամովին հրաժարած էր աշխարհէ եւ չնայեցաւ ետ. ունէր իրաւունք Խոջայ Նազար վկայելու անոր համար թէ «սա զաշխարհաւ

⁷ Սիրմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, տե՛ս վերը, էջ 14—15:

⁸ Առ. Դաւրիթեցի, 286: